ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
Հատոր 2, համար 2, 2008թ.
www.ysmu.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Մարդիյան Մ. Ա., Սականյան Գ.Գ., Մարկոսյան Ա. Ա.

ՀՀ, Երևանի Մ. Հերացու անվ. պետ. բժշկական համալսարանի հասարակական առողջության և առողջապահության ամբիոն, Երևան, Հայաստան

Հոդվածում առաջին անգամ ամփոփված է ՀՀ դեռահասների առողջության համալիր ուսումնասիրության և գնահատման արդյունքները: Դեռահասների ֆիզիկական զարգացման ուսումնասիրության արդյունքում, մշակված ստանդարտների օգնությամբ, գնահատվել է ֆիզիկական զարգացման մակարդակը և տրվել առողջության համալիր գնահատական: Հետազոտությունների արդյունքներում ստացվել է վիճակագրորեն հավաստի տվյալներ. ֆիզիկական զարգացման մակարդակը էական ազդեցություն է ունենում քրոնիկ հիվանդությունների ձևավորման վրա: Բազմաֆակտորային դիսպերսիոն վերլուծության մեթոդի օգնությամբ գնահատվել է դեռահասների առողջության վրա սոցիալ-հիգիենիկ առանձին գործոնների ազդեցությունը, ինչպես նաև՝ հիմնավորվել է գործոնների ազդեցության համակցությունների չափաբաժինը: Ստացված արդյունքները հիմք են հանդիսացել մշակելու և գործնական առողջապահական համակարգում ներդնելու դեռահասների առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված կազմակերպչական միջոցառումների համակարգ: Առաջարկվող համակարգը կապահովի ՀՀ դեռահասների բուժկանխարգելիչ օգնության որակի բարելավում և կազմակերպական կատարելագործում:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY